ՍԼՈՎԱԿԻԱՅԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՑԵԼԵՑ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 3 փետրվարի 2000 թ.:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Սլովակիայի պաշտոնական պատվիրակությունը՝ Սլովակիայի Արտաքին գործերի և Էկոնոմիկայի նախարարներ Էդուարդ Կուկանի և Լյուբոմիր Հարախի գլխավորությամբ: Պատվիրակությանն ընկերակցում էր Ռուսաստանում Սլովակիայի դեսպան Իգոր Ֆուրդիկը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ուրախությամբ ողջունեց Սլովակիայի պատվիրակության Հայաստան այցը, որն իր նպաստը կբերի երկու երկրների զարգացմանը: «Մասնավոր ուրախություն է, որ անկախության նոր պայմաններում ինչպես մեր, այնպես էլ Սլովակիայի պարագայում երկու հինավուրց երկրներ համագործակցության նոր շունչ են դրսևորում, քանզի ժողովուրդներն առանձին չեն կարող բարօր կյանք ստեղծել»,- ասաց Վեհափառ Հայրապետը:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, Է. Կուկանը նշեց. «Մեծ պատիվ է մեզ համար Մայր Աթոռ Ս. Էջմիածնում գտնվելը, և գիտակցում ենք նաև Ձեր ողջ պատասխանատվությունը, որ կրում եք համայն հայության առջև»:

Օգտվելով առիթից, Նորին Սրբությունը պատվիրակության անդամներին իր ցավակցությունը հայտնեց Չեխիայի և Սլովակիայի Պատրիարք Դորոթեյ արքեպիսկոպոսի վախճանման առիթով:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ